

«ՀԱՍՏԱՏՎԱԾ»
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Խորհրդի «25» հունիսի 2025թ.

թիվ 21/01Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ

Գրիգոր Հովհաննիսյան_____



ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Ուժի մեջ է՝ 2025թ.-ի հունիսի «25»-ից

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ	3
ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ.....	3
ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ	3
ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ.....	3
ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ	4
ԳԼՈՒԽ 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ	5
ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	5
ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	5
ԳԼՈՒԽ 2. ԿՈՐՊԱՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ	8
ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	11
ԳԼՈՒԽ 4. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ	14
ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	15
ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ	15
ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	16
ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ	16
ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	16

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

ԲԱԺԻՆ 1. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Բանկի Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը սահմանում է Բանկում կորպորատիվ կառավարման նպատակները, սկզբունքներն ու կանոնները:
2. Բանկն իր երկարամյա գործունեության ընթացքում ղեկավարվել և ղեկավարվում է հասարակության և պետության առջև բարձր պատասխանատվության, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության սկզբունքներով:
3. Բանկը կարևոր դիրք է զբաղեցնում տնտեսությունում՝ խնայողներից և ավանդատուներից միջոցներ ներգրավելով և դրանք տեղաբաշխելով ձեռնարկություններին և անհատներին, որոնք աջակցում են և խթանում պետության տնտեսական աճը:
4. Բանկի անվտանգությունն ու ապահովությունը կարևոր են ֆինանսական կայունության համար, հետևապես Բանկում կորպորատիվ կառավարման գործուն մեխանիզմների առկայությունը կարևոր նշանակություն ունի պետության տնտեսության համար:
5. Բանկը գտնում է, որ Բանկի նպատակներին հասնելու լավագույն կառավարման միջոցը կորպորատիվ կառավարումն է, որի շնորհիվ Բանկի կառավարման մարմինների միջև գործառույթների ու որոշումների կայացման իրավասությունների հստակ բաշխում է տեղի ունենում:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

6. Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջները տարածվում են Բանկի կորպորատիվ կառավարման, ղեկավարման և գործառնությունների մեջ ներգրավված բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:

ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

7. Կորպորատիվ կառավարման կանոնագիրքն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

- 1) «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք,
- 2) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք,
- 3) Բանկի Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 01/02Լ որոշմամբ հաստատված «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կանոնակարգ»,
- 4) Բանկի Խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 15/10Լ որոշմամբ հաստատված «Խորհրդի կանոնակարգ»,
- 5) Բանկի Խորհրդի 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 16/01Լ-Հ որոշմամբ հաստատված «Վարչության կանոնակարգ»,
- 6) Բանկի Խորհրդի 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 02/01Լ-Հ որոշմամբ հաստատված «Իրավական ակտերի նախագծերի պատրաստման և ընդունման կարգ»,
- 7) Բանկի Խորհրդի 2019 թվականի հուլիսի 10-ի թիվ 27/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Բանկի տեղեկատվական ակտիվների դասակարգման և նույնականացման կարգ»,
- 8) ԻՍՕ/ԻԷԿ 27001:2022 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգեր. Պահանջներ» ստանդարտ:

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

8. Կորպորատիվ կառավարման կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
 - 1) **Բանկ**՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ,
 - 2) **Կանոնագիրք**՝ Բանկի Կորպորատիվ կառավարման կանոնագիրք,
 - 3) **Կորպորատիվ կառավարում**՝
 - ա. համակարգ, որով Բանկը ղեկավարվում և վերահսկվում է,
 - բ. տնտեսական արդյունավետության և աճի բարելավման, ինչպես նաև ներդրողների վստահության ամրապնդման կարևոր տարր,
 - գ. Բանկի Գործադիր մարմնի, Խորհրդի, բաժնետերերի և այլ շահառուների միջև առկա հարաբերությունների համալիր,
 - դ. Բանկի նպատակների ձևավորման, դրանց հասնելու որոշումների կայացման, ինչպես նաև գործունեության վերահսկողության միջոցների սկզբունքները և մեխանիզմները սահմանող համակարգ:

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

Կորպորատիվ կառավարումը նաև սահմանում է սկզբունքներ և մեխանիզմներ, որոնց միջոցով ձևավորվում են Բանկի նպատակները, որոշվում են դրանց հասնելու, ինչպես նաև գործունեության վերահսկողության միջոցները,

- 4) **Ժողով**՝ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողով,
- 5) **Խորհուրդ**՝ Բանկի Խորհուրդ,
- 6) **Գործադիր մարմին**՝ Բանկի Վարչություն և/կամ Գործադիր տնօրեն:

ԳԼՈՒԽ 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

9. Խմբագրություն 02: Կոնոնակարգն ամբողջությամբ լրամշակվել է:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

10. Կանոնագիրքը հավելվածներ չունի:

ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Բանկի կորպորատիվ կառավարման համակարգում հստակ սահմանվում են բանկի Խորհրդի և Վարչության դերերն ու պարտականությունները:

12. Խորհրդի պարտականությունները՝

1) առաջնորդություն և ռազմավարական վերահսկողություն՝

ա. սահմանել և մշտադիտարկել Բանկի երկարաժամկետ ռազմավարական ուղղությունը,

բ. ապահովել Բանկի առաքելության, արժեքների և դիսկի ախորժակի միջև համապատասխանությունը,

2) անկախություն և օբյեկտիվություն՝

ա. ներգրավել համապատասխան թվով Խորհրդի ոչ գործադիր անկախ անդամների,

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆԲ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

բ. ապահովել Խորհրդի նախագահի և հիմնական հանձնաժողովների (աուդիտ, ռիսկերի կառավարում, վարձատրություն) անկախությունը,

3) թեկնածուների առաջադրում և իրավահաջորդության պլանավորում՝

ա. նշանակել և ազատել պաշտոնից Բանկի Գործադիր տնօրենին և Վարչության անդամներին,

բ. հսկել հիմնական գործադիր կազմի իրավահաջորդության պլանավորումը,

4) ռիսկի կառավարում՝

ա. հաստատել ռիսկի ախորժակի ընդհանուր շրջանակը,

բ. ապահովել ռիսկերի կառավարման կայուն համակարգի առկայությունը,

գ. վերահսկել ռիսկերի կառավարման գծով պատասխանատուի գործունեությունը և ստանալ ռիսկերի գնահատման անկախ զեկույցներ,

5) ֆինանսական հաշվետվությունների ամբողջականություն՝

ա. ապահովել ֆինանսական հաշվետվությունների և տեղեկատվության բացահայտման ամբողջականությունը,

բ. վերահսկել ներքին և արտաքին աուդիտի գործառույթների իրականացումը և ապահովել դրանց հետ փոխազդեցությունը,

գ. հաստատել և վերանայել ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն գործող ստանդարտների,

6) վարձատրության մեխանիզմի վերահսկում՝

ա. սահմանել և վերահսկել Վարչության անդամների վարձատրության քաղաքականությունը

բ. համապատասխանեցնել աշխատանքային խթանները երկարաժամկետ ռիսկով ճշգրտված կատարողականին,

7) շահագրգիռ կողմերին և բաժնետերերին հաշվետվողականություն՝

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆԲ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

ա. կատարել բաժնետերերի նկատմամբ ֆիդուցիար պարտականությունները,

բ. ապահովել թափանցիկ հաղորդակցություն բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ կարգավորող մարմինների և հանրության հետ,

8) Խորհրդի արդյունավետություն և գնահատում.

ա. կանոնավոր կերպով գնահատել Խորհրդի և Խորհրդին կից գործող հանձնաժողովների աշխատանքը,

բ. կազմակերպել Խորհրդի աշխատանքի արտաքին գնահատումներ :

13. Վարչության պարտականությունները՝

1) գործառնական գործունեություն՝

ա. իրականացնել Խորհրդի կողմից հաստատված ռազմավարությունը և բիզնես պլանը,

բ. կառավարել բանկային գործառնությունների կատարումը, ներառյալ վարկային, գանձապետական, հաճախորդների սպասարկման և մարդկային ռեսուրսների կառավարման գործառնությունները,

2) ռիսկերի կառավարում՝

ա. մշակել ռիսկերի կառավարման համակարգեր և վերահսկողության մեխանիզմներ և ապահովել դրանց կիրառումը,

բ. իրականացնել ռիսկերի ամենօրյա մշտադիտարկում, Խորհրդին հաղորդել խախտումների կամ էական զարգացումների մասին,

3) համապատասխանության ապահովում կարգավորողի և իրավական պահանջներին՝

ա. ապահովել բոլոր համապատասխան ֆինանսական և պրուդենցիալ կարգավորումներին համապատասխանությունը,

բ. անհրաժեշտության դեպքում փոխգործակցել կարգավորող մարմինների հետ և ժամանակին ներկայացնել հաշվետվությունները,

4) ֆինանսական կառավարում և վերահսկողություն՝

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

ա. կազմել բյուջե, իրականացնել կանխատեսումներ և կազմել ֆինանսական հաշվետվություններ,

բ. հաստատել և պահպանել ներքին ֆինանսական և գործառնական վերահսկողության կայուն մեխանիզմ,

5) Կազմակերպչական առաջնորդություն՝

ա. առաջնորդել կազմակերպչական մշակույթը, աշխատակիցների ներգրավվածության և էթիկական վարքագծի բոլոր ասպեկտները,

բ. խթանել համապատասխանության առողջ մշակույթը՝ վարքագծի կանոնագրքի համաձայն,

6) հաշվետվությունների ներկայացում Խորհրդին՝

ա. Խորհրդին ժամանակին տրամադրել, ճշգրիտ և ամբողջական հաշվետվություններ Բանկի կատարողականի, ռիսկերի, համապատասխանության և ցանկացած էական միջադեպի վերաբերյալ,

7) շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ (գործառնական մակարդակ)՝

ա. կառավարել հաճախորդների, մատակարարների և գործառնական գործընկերների հետ հարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2. ԿՈՐՊԱՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ

14. Կանոնագրքի հիմքում դրված են հետևյալ սկզբունքները՝ հաշվետվողականություն, անկախություն, ռիսկերի վերահսկողություն, թափանցիկություն, Խորհրդի կազմի բազմազանություն և աշխատանքի գնահատում, էթիկա և վարքագիծ:

Եվ՝ Խորհուրդը, և՛ Վարչությունն անմիջական պատասխանատվություն են կրում սույն սկզբունքները պահպանելու և իրագործելու համար՝ յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունների շրջանակներում:

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

Սկզբունք	Խորհուրդ	Վարչություն
Հաշվետվողականություն	Հաշվետու է բաժնետերերին և հանրությանը	Հաշվետու է Խորհրդին
Անկախություն	Պետք է ներառի անկախ անդամներ	Անկախ չէ՝ կառավարման մաս է կազմում
Ռիսկերի վերահսկողություն	Սահմանում է ռիսկի ախորժակը, հսկում է ռիսկի մակարդակը	Իրականացնում է վերահսկողություն, կառավարում է ռիսկը
Թափանցիկություն	Ապահովում է տեղեկատվության բացահայտման և ամբողջականության ասպեկտները	Տրամադրում է տվյալներ հաշվետվությունների կազմման համար
Խորհրդի կազմի բազմազանություն և գնահատում	Վերահսկում է Խորհրդի կազմի բազմազանությունը, գնահատում է Խորհրդի աշխատանքը	Ստեղծում է բազմազան թիմեր, ենթակա է գնահատման Խորհրդի կողմից
Էթիկա և վարքագիծ	Ապահովում է «tone at the top» սկզբունքի կիրառումը	Առաջնորդում է օրինակով, ներդնում է էթիկայի մշակույթ

15. Բանկի կառավարման մարմիններն իրենց գործառույթներն իրականացնելիս առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝

1) Բանկի կառավարմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը.

Բանկը՝ որպես մեկ ամբողջություն, ապահովում է հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնետերերի նկատմամբ՝ նրանց կողմից Բանկի կառավարմանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և որոշում կայացնելու համար,

2) Խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման բաժնետիրոջ իրավունքը.

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը պետք է խթանի բաժնետիրոջ արդյունավետ մասնակցությունը Խորհրդի անդամների

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

թեկնածուների առաջադրման և Խորհրդի անդամների ընտրության գործընթացին,

3) Խորհրդի վարձատրության քաղաքականությունը.

Բաժնետերը պետք է հնարավորություն ունենա կարծիք արտահայտել Խորհրդի անդամների վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ Ժողովում քվեարկության միջոցով,

4) Բանկի բաժնետերերի նկատմամբ հավասար վերաբերմունքը.

ա. շահաբաժինների համաչափ հասանելիություն (ըստ բաժնետոմսերի քանակի և դասի),

բ. արդար և հավասար վերաբերմունք քվեարկության, մասնակցության և տեղեկատվության հասանելիության իրավունքների առումով,

5) Պաշտպանություն անարդար գործելակերպերից, ինչպիսիք են տեղեկատվության ընտրողական բացահայտումը կամ ֆավորիտիզմը

ա. Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը պաշտպանում է փոքր բաժնեմասնակցություն ունեցող բաժնետերերին ի շահ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի կամ կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի կողմից կատարվող չարաշահումներից,

6) Բանկը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական Խորհրդի կողմից, որի դերն է նպաստել Բանկի երկարաժամկետ կայուն հաջողությանը, բաժնետերերի համար արժեքի ստեղծմանը և Բանկի շահառուների աջակցմանը,

7) «Tone at the top» սկզբունքը

Խորհրդի կողմից ձևավորվում են այնպիսի կորպորատիվ արժեքներ, որոնք ստեղծում են ակնկալիքներ, որ Բանկի գործունեությունը պետք է իրականացվի օրինական և էթիկական ձևով, և իրականացվի վերահսկողություն Գործադիր մարմնի և այլ աշխատակիցների կողմից այդ արժեքների պահպանման նկատմամբ՝

ա. խթանելով ռիսկի մասին իրազեկվածությունն ուժեղ ռիսկի մշակույթում՝ փոխանցելով Խորհրդի այն ակնկալիքը, որ վերջինս չի աջակցում չափից շատ ռիսկ վերցնելուն և որ բոլոր

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

աշխատակիցները պատասխանատու են սահմանված ռիսկի ֆիզիկական և ռիսկերի սահմաններում գործունեություն իրականացնելու հարցում Բանկին օգնելու համար,

բ. հաստատելով, որ ձեռնարկվել կամ ձեռնարկվում են համապատասխան քայլեր Խորհրդի սահմանած կորպորատիվ արժեքները, մասնագիտական ստանդարտները կամ վարքագծի կանոններն իրենց օժանդակ փաստաթղթերի հետ միասին Բանկում ամբողջությամբ հաղորդակցելու համար,

գ. հաստատելով, որ աշխատակիցները՝ ներառյալ Գործադիր մարմինը, տեղյակ են, որ անընդունելի վարքագծին և օրինազանցություններին կհետևեն համապատասխան կարգապահական կամ այլ գործողություններ,

8) Խորհրդի ձևավորման թափանցիկության և Խորհրդի պրոֆեսիոնալիզմի սկզբունք,

9) Ռիսկի պատշաճ կառավարման սկզբունք.

Բանկը պետք է ունենա ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, որն օբյեկտիվ և արդարացի պատկերացում է տալիս Բանկի ընթացիկ և հեռանկարային վիճակի մասին և նպաստում է Բանկում տեղեկացված և խելամիտ որոշումների կայացմանը,

10) Ներքին աուդիտի վարչության, Համապատասխանության ապահովման խմբի և Ռիսկերի կառավարման վարչության աշխատանքի կազմակերպման, վերջիններիս գործնական անկաշկանդվածության և գործունեության թափանցիկության սկզբունքը:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Խորհրդի անդամների հիմնական ունակությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

1) բանկային և ֆինանսական հմտություններ՝

ա. բանկային գործառնությունների, ներառյալ վարկավորման, ավանդների կառավարման և վճարային համակարգերի խորը իմացություն,

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

- բ. հաշվեկշիռների, կապիտալի համարժեքության և իրացվելիության կառավարման իմացություն,
 - գ. ֆինանսական հաշվետվությունների, աուդիտի և կատարողականի ցուցանիշների իմացություն,
- 2) ռիսկերի կառավարման փորձ՝
- ա. ռիսկերի հիմնական տեսակների՝ վարկային, շուկայական, գործառնական, իրացվելիության, համբավի և կիրճանվտանգության ռիսկերի նույնականացման, գնահատման և վերահսկման փորձ,
 - բ. ռիսկի ախորժակի շրջանակների, ներքին վերահսկողության և կարգավորող կապիտալի պահանջների (օրինակ՝ Բազել III/IV) իմացություն,
- 3) կարգավորող և իրավական գիտելիքներ՝
- ա. կարգավորող դաշտի իմացություն (օրինակ՝ AML/CFT, KYC, սպառողների պաշտպանություն, տվյալների գաղտնիություն),
 - բ. կորպորատիվ կառավարման կանոնագրքերի, բանկային օրենսդրության, ֆիդուցիար պարտականությունների և էթիկական պարտավորությունների վերաբերյալ իրազեկվածություն,
- 4) ռազմավարական մտածողություն և գործարար դատողություն՝
- ա. Բանկի երկարաժամկետ ռազմավարությունը քննադատաբար գնահատելու և հաստատելու ունակություն,
 - բ. նոր բիզնես մոդելների, նորարարության (օրինակ՝ ֆինանսական տեխնոլոգիաների) և միաձուլումների և ձեռքբերումների (M&A) հնարավորությունների գնահատման կարողություն,
 - գ. առողջ դատողություն և որոշումների կայացում անորոշության կամ ճգնաժամի պայմաններում,
- 5) կորպորատիվ կառավարում և էթիկա՝
- ա. կառավարման սկզբունքների, Խորհրդի պարտականությունների և շահագրգիռ կողմերի առջև հաշվետվողականության խորը իմացություն,

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

բ. բարոյական բարձր արժեքներ, էթիկական առաջնորդություն և մտքի անկախություն,

գ. շահերի բախման, ահազանգողների (whistleblower) պաշտպանության և թափանցիկության պահանջների իմացություն,

6) աուդիտ և ֆինանսական հաշվետվությունների վերահսկողություն՝

ա. աուդիտի սկզբունքների, հաշվապահական նորմերի (օրինակ՝ IFRS-ի) և Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի պարտականությունների իմացություն,

բ. արտաքին և ներքին աուդիտի գործառույթները վերահսկելու և տեղեկատվության բացահայտման ամբողջականությունն ապահովելու ունակություն,

7) թվային և տեխնոլոգիական իրազեկվածություն՝

ա. ծանոթություն թվային փոխակերպմանը, կիրքերանվտանգության ռիսկերին, ֆինանսական տեխնոլոգիաների միտումներին և տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարմանը,

բ. հատկապես կարևոր է ժամանակակից բանկային ոլորտում, որտեղ մեծ է միայն թվային հարթակում գործող մասնակիցների մրցակցությունը,

8) առաջնորդություն և Խորհրդի դինամիկա՝

ա. կոլեկտիվ որոշումների կայացման, կոնսենսուսի կառուցման և հանձնաժողովների նախագահության համար անհրաժեշտ հմտություններ,

բ. կառավարման մարմիններին կառուցողական մարտահրավեր նետելու և բազմազան տեսակետներին նպաստելու ունակություն:

17. Խորհրդի անդամները պատշաճ քննարկում և նախանշում են Բանկի ռազմավարությունը և զարգացման հիմնական ուղիները: Խորհրդի համար պետք է ստեղծվեն նաև հարմար պայմաններ ռազմավարությունները քննարկելու համար:

18. Խորհրդի անդամները գործում են լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով Բանկի և բաժնետերերի լավագույն շահերից և հաշվի առնելով Բանկի շահակիցների շահերն ու սպասումները:

19. Խորհրդի էթիկական հանձնառությունը.

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

Խորհուրդը հետևում է բարձր էթիկական ստանդարտներին՝ որպես Բանկի նկատմամբ վստահության բարձրացման և կորպորատիվ հեղինակության կառավարման միջոցի:

20. Տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն ստանալու Խորհրդի անդամների իրավունքները.

Իր պարտականությունները պատշաճ կատարելու համար Խորհրդի անդամը պետք է հասանելիություն ունենա արդիական և հավաստի տեղեկատվության, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվության:

ԳԼՈՒԽ 4. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդի գնահատման և վարձատրության սկզբունքը.

21. Տարեկան կտրվածքով պետք է լինի Խորհրդի նախագահի և առանձին անդամների, Խորհրդին կից հանձնաժողովների գործունեության վերաբերյալ պաշտոնական գնահատական, որը պետք է հրապարակվի: Խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է նաև տարեկան ինքնագնահատական իրականացնի՝ ներկայացնելով իր տարեկան աշխատանքի արդյունքները:

Գործադիր մարմնի գնահատման և վարձատրության սկզբունքները.

22. Խորհուրդը տարեկան կտրվածքով գնահատում է Բանկի Գործադիր տնօրենի, ինչպես նաև Բանկի Վարչության՝ որպես կոլեգիալ մարմնի գործունեությունը՝ հաշվի առնելով Բանկի Վարչության անդամների մասնագիտական որակները և վերջիններիս միմյանց հետ համագործակցելու, Բանկի մարդկային ռեսուրսները և ռիսկերը կառավարելու ունակությունները:

Վարձատրության համաչափության սկզբունքը.

23. Խորհուրդը պետք է հաստատի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատակիցների փոխհատուցումը, ինչպես նաև վերահսկի փոխհատուցման քաղաքականության, համակարգերի և դրա հետ կապված վերահսկման գործընթացների մշակումը և գործարկումը: Վարձատրության չափը պետք է կրի անհատական բնույթ, մասնավորապես՝ «շատ ռիսկ՝ մեծ վարձատրություն», «քիչ ռիսկ՝ ցածր վարձատրություն»:

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

24. Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ապահովի Բանկի թափանցիկությունը, այդ թվում՝ նրա ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, Բանկի սոցիալական, բնապահպանական, էթիկական ազդեցության, սեփականության և կառավարման կառուցվածքների ու այլ էական հարցերի վերաբերյալ արժանահավատ և էական տեղեկատվության ժամանակին բացահայտումը:
25. Բանկի թափանցիկությունն անհրաժեշտ է Բանկի վերաբերյալ դրա բաժնետերերի, այլ շահակիցների և ընդհանրապես լայն հանրության կողմից հիմնավորված որոշումներ կայացնելու համար:

Բանկի հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը.

26. Բանկի կողմից տեղեկատվության բացահայտումը պետք է ներառի, սակայն չսահմանափակվի տարեկան հաշվետվությունների հրապարակմամբ:
27. Բանկն իր համացանցային էջի միջոցով ժամանակին պետք է ապահովի բացահայտման ենթակա տեղեկատվության հրապարակումը:

ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ

28. Բանկը պետք է ենթարկվի արտաքին աուդիտի անկախ, կոմպետենտ և որակավորված աուդիտորական կազմակերպության կողմից՝ աուդիտի, էթիկայի և անկախության միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ Խորհրդի, բաժնետերերի ու այլ շահառուների համար արտաքին և օբյեկտիվ հավաստիացում ապահովելու համար առ այն, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատորեն արտացոլում են նրա ֆինանսական վիճակը և գործունեության ֆինանսական արդյունքները:
29. Բանկը պետք է ունենա արտաքին աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպության ընտրության կարգ, որով կսահմանվեն աուդիտորական կազմակերպությանը ներկայացվող չափանիշները, ռոտացիայի ժամկետները, մրցույթների կազմակերպման, անցկացման և ամփոփման կարգն ու ժամանակացույցը:

	Կանոնագիրք Կորպորատիվ կառավարման	Կոդ: ԿՆԳ03 - 01 Խմբագրություն: 02 Դաս: ՆՔ Ամսաթիվ: «25» հունիսի 2025թ.
---	---	---

30. Խորհուրդը կամ Խորհրդին կից Աուդիտի հանձնաժողովը պետք է կանոնավոր հանդիպումներ ունենան Բանկի արտաքին աուդիտորի հետ:
31. Արտաքին աուդիտորը պետք է հաշվետու լինի բաժնետերերին՝ աուդիտի իրականացման ընթացքում Բանկի նկատմամբ պատշաճ մասնագիտական հոգաճություն ցուցաբերելով:

ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

32. Կանոնագրքով սահմանված գործընթացներում ներգրավված Բանկի աշխատողներն անհատական պատասխանատվություն են կրում Բանկի ներքին իրավական ակտերով, նրանց հետ կնքված աշխատանքային և նյութական պատասխանատվության պայմանագրերով՝ Կանոնագրքով նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունները ճշգրիտ և պատշաճ չիրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

33. Կանոնագրքի իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Բանկի Աշխատակազմը, իսկ վերահսկողությունը՝ Բանկի Ներքին աուդիտի վարչությունը: